# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՈՂԱՆԴԸ ՄԻԼԱՆՈՅԻ ՄԽ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ. — Յունուար 3-ին, ցերեկէն վերջ, Միլանոյ «Հայ Ոս. Միութեան» զօրեղի նախաձեռնութեամբ կազմակերպուեր է ի նպաստ Մխ. Վարժարանի որբերուն՝ գեղեցիկ հանդէս մը։ Նախագահեր է՝ ա ս առաջին անգամ՝ քաղաքին Վսեմ. Ծիրանաւորը Թոզի։ Ներկայ գտնուած են խորհրդ. Հայաստանի Առեւտրական Ներկայացուցիչը Պ. Սակինցեան, Հայ Գաղութը և ուրիշ անձնաւորութիւններ։ Խանդավառ եղած է ընդունելութիւնը Ծիրանաւորին ժամանման պահուն, Վսեմ. Հիւրը նախ առաջնորդուեր է Մատուռ, ուր փոքրիկ արարողութենէ մը վերջ օրհնած է զամէնքը։ Դահլիճին մէջ սոյն Ուսանողաց կողմանէ գեղեցկօրէն պատրաստուած «Ծննդեան Ծառ»ի մը շուրջ կը կատարուի ակադեմական հանդէս մը՝ արտասանութիւններով ու քառաձայն երգերով՝ որոնք ծափեր խլած են. ողջոյնի ջերմ խօսքեր ուղղած է նաև Ծիրանաւորը։ Հուսկ՝ որբերուն բաշխուած են Ծառին նուէրները, որոնց մէջ է նաև Վսեմ. Թոզիի կողմանէ սուրբի գեղեցիկ սպաս մը։ Մխիթարեան Վարժարանի Վարչութիւնը Ծիրանաւորին նուիրած է՝ ի յիշատակ այդ առաջին այցելութեան՝ Հայ ժամագրքի լատիներէն թարգմանութենէն օրինակ մը փառակազմ, անոր զինանշանով։

***. — Սոյն Հաստատութեան մատրան մէջ ամսուս 10-ին ալ մատուցուեր է Ջայնաւոր պատարագ մը և Հոգեհանգիստ՝ Ուխտիս և Հայութեան օգոստափառ բարեկամ ողբացեալ Մարգարիտա Մայր Թագուհւոյն համար։

ՀԱՅ ՔԱՋԱԳՈՐԾ ԱԽՈՅԵԱՆ ՄԸ. — Միլան հրատարակուող «La Gazzetta dello Sport»էն ուրախութեամբ կ'իմանանք, որ Մ. Ռաֆայելեան Համալսարանական Ուսանող Պ. Յակոբ Թաշճեան՝ ըմբշական արշաւատեղւոյ մը մէջ փայլուն յաջողութիւններով ձեռք բերած է հետևեալ ծափահարելի մրցանիշերը.

Հարքարշաւ. — ԵՐԿՐՈՐԴ

Կեցած երկայնութ. ցատկել. մեդր 2,80. — ԱՌԱՋԻՆ

Ույժ առած երկայնութիւն ցատկել. մեդր 5,70. — ԱՌԱՋԻՆ

Կեցած բարձրութ. ցատկել. մեդր 1,32. — ԵՐԿՐՈՐԴ

Ույժ առած բարձրութիւն ցատկել. մեդր 1,55. — ԱՌԱՋԻՆ

Երրեակ ոստում. մեդր 12,35. — ԱՌԱՋԻՆ

Տէգընկեցութիւն. » 43,30. — ԱՌԱՋԻՆ

Ծանրաձգութիւն. » 9,77. — ԱՌԱՋԻՆ

Ջերմագին ուրախակցութիւններ Հայ ցեղին այս պատուաբեր զաւկին։

ՆՈՐ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ. — Հաճոյքով կ'իմանանք Փարիզէն, որ մեր աշխատակիցը Մեծ. Տօքթ. Վահր. Թորգոմեան պատուուեր է Ֆրանսական կառավարութենէն Ասպետ Պատուոյ Լեգէոնի պատուանշանով՝ ի վարձ իր բանասիրական աշխատութեանց։ — Ջերմ շնորհաւորութիւններ։

# ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Ս. ՏԷՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ. Լոնտոն. — Ստացանք Ձեր բաժնեգինը, ինչպէս և միւս երկուքը. Նամակով պատասխանեցինք։

ՏՕՔԹ. Յ. ՂԱԶԱՐԵԱՆ. Պանեա–Լուքա. — Ստացած ենք գումարը. լաւ է։ Անշուշտ ընդունեցաք Ձեր խնդրած 1926-ի Տարեցոյցը. մեր քով չի գտնուիր 1925-ի Ամ. Տարեցոյցը։

ՏԻԿ. ԵՐԱՆՈՒՀԻ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ. Լայբցիկ. — Ստացանք բաժնեգինը։

Պ. ՀԱՅԿԱԶՆ Յ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. Մարսէյլ. — Ձեր նոր հասցէին կ'առաքենք Բզմ ը. ստացած ենք բաժնեգինը փոխադարձ մաղթանքներ։

ՏԻԿ. ՎԻՐԳԻՆԷ Ա. ՍԱՐԳԻՍ. Մարսէյլ. — Նոյնպէս։

Պ. ՅԱԿՈԲ ԵՋԻԿԵԱՆ. Ալեքսանդր. — Ընդունեցանք գումարը։ Գրքերն ու Բզմ ը. շուտ կը ստանաք։

digitised by A.R.A.R.@

# ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

*Կը հաղորդենք մեր պատուական Բաժանորդաց որ տպագրական և տաքման ծախսերու նորանոր յաւելման պատճառաւ* 1926-*ի «Բազմավէպ»ի տարեկան բաժնեգին սահմանուած է ֆր. դաղղ.* 50. *Ամերիկայի համար՝ տոլար* 3. *ԿԱՆԽԻԿ.*

ԲԱԶՄԱՎԷՊ 1926 *մէն մի թիւ առանձին՝ ֆր.* 5.

ԲԱԶՄԱՎԷՊԻ *նախընթաց տարիներ* — 12 *թիւ միանգամայն՝ ֆր.* 60 — *տոլ* 5.

ԲԱԶՄԱՎԷՊԻ *նախընթաց տարիներէն մէն մի թիւ առանձին՝ ֆր.* 6.

ԲԱԶՄԱՎԷՊԻ *ամբողջական հաւաքածոն* (1843–1926) *ֆր.* 3500 *գեղչեալ գնով.*

ԲԱԶՄԱՎԷՊԻ 1901, 1902, 1903 *տարիները առանձին (հատով) չեն ծախուիր.*

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ՅՈՎՀ. ԱԽԱՊԵԱՆ. — *Գրական դէմքեր (տպաւորութիւններ և նշմարներ). պատկերազարդ. Նիւ-Եորք* 1925. *էջ* 276. *գին՝* 1,50 *տոլար.*

ՏՕՔԹ. Ա. ՆԱԳԳԱՇԵԱՆ. — *Այաշի բանտը.* (1925 *Ապրիլ* 24 *ին* Կ. *Պոլսէն ձերբակալուելով Այաշ տարուած և նահատակուած մտաւորականները). Նիւ-Եորք* 1925. *էջ* 63. *գին՝* 50 *սէնթ.*

ԵՂԻՇԷ ԵՊԻՍ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ. — *Արձագանգ զանազան Ազգ. Անց ու Դարձերու (շարք մը լրագրական յօդուածներու և նամակներու). Երուսաղէմ* 1925. *էջ* 302. *գին՝* 20 *ղր. եգ.*

*Հ. Ս. Խ. Հ. Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր.* N. 1. *Երեւան* 1925. *էջ* 182 *գին՝* 2 *ռուբ. Ս. Խ. Հ. ում.* 1 *տոլար՝ արտասահմանում.*

Յ. ԽԱՇՄԱՆԵԱՆ. — *«Ամերիկահայ Հանրագիտակ Տարեգիրք Բ. տարի* 1926*» Պոսթըն. էջ* 310. 1 *տոլլար.*

ԲԵՌՕՅ. — *Մանկավէպեր. Թրգմ.* ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ. *Պոլիս* 1925. *Տպ. «Արև»ի. էջ* 110. *գին՝* 50 *ղր.*

ՏՕՔԹ. ՌՈՒԲԷՆ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ (Ռ. Սեւակ). — *Բժիշկին գրքերէն փրցուած էջեր. Սելանիկ* 1925. *տպ. «Ալիք». Հրատ. «Գողթան» Գրատան. էջ* 124. *գին՝* 20. *տրխմի. արտասահ.* 10 *ֆր.*

*Օրացոյց Ս. Էջմիածինի.* — 1926. *Ղարաքիլիսայի տպարան. էջ* 220. *գին՝* 50 *կոպ.*

ԷՄԻԼ ԶՕԼԱ. — *Թերէզ Ռաքէն. Թրգմ.* ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ. *Գահիրէ* 1925. *տպ. «Յուսաբեր». Մատենաշար «Յուսաբեր» թիւ* 9. *էջ* 344. *գին՝* 15 *ե. գ.*

ՓՐՕՖԷՍԷՕՐ Ն. ՄԱՌ. — *Հայկական մշակոյթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզուագիտութեան (Փարիզի Հայ Ուս. Միութեան կողմէ կազմակերպուած երեկոյթի մէջ կարդացած դասախօսութիւնը). Փարիզ* 1925. *Հրատկչ.* Յ. Բ. *Թիւրապեան. տպրն. «Արձագանգ Փարիզի»ի. էջ* 32. *գին՝* 5 *ֆր.*

digitised by A.R.A.R.@